

ՎԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՀՐԱՀԱՆԳ  
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԻ  
ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԱՊԱՏՎԱՆ  
ՍՏԱՑՈՒԱԹՔՆԵՐԻ ՎԱՌՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ПРАВИЛА  
И  
ИНСТРУКЦІЯ

ПО УПРАВЛЕНІЮ ИМУЩЕСТВАМИ  
С.-ПЕТЕРБУРГСКИХЪ И МОСКОВСКИХЪ  
АРМЯНСКИХЪ ЦЕРКВЕЙ.

С.-ПЕТЕРБУРГЪ  
„Пушкинская Скоропечатня“. Лештуковъ, 4.  
1901



281.6(09)

4-21

ՅՏՈՒԿԱՆ Է 1961 Ք.

ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՀՐԱՀԱՆԳ

Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԻ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ

ՍՏԱՅՈՒԱԾՔՆԵՐԻ ԿՈՌԱՎՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԵԿԵ



Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՊՈՒՅԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ՝ ՏՊԱՐԱՆ

1901

Дозволено цензурою. С.-Петербургъ. 28 Сентября 1901 года.

A  $\frac{\text{II}}{5666}$

## Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

Ս.-ՊԵՏԵՐՐՈՒՐԳԻ ԵՒ ՄՈՍԿՈՒՍՅԻ ՀԱՅՈՅ  
ԵԿԵՂԵՅԱՊՍՏԿԱՆ ՍՏԱՅՈՒԱԾՔՆԵՐԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Հանձնարանի նախադրարդ Մասնախոհների որոշման  
Բարձրագույն հրահանգով հաստատարան է 1883 թ.  
նոյեմբերի 18-ին:

1) Ս.-Պետերբուրգի և Մոսկուայի Հայոց Եկեղեցասպարական ստացուածքների և նոցա վերաբերեալ դործերի կառավարութիւնն յանձնվում է, իւրաքանչիւր քաղաքում, առանձին Խորհրդարանին, որ կառավարվում է նախագահից և վեյ՝ միմեանց հաւասար իրաւունքով անդամներից, որոնց ընտրում են ճիսականները իրանց մէջից եռամեայ ժամանակով:

2) Եւրու Խորհրդարաններին էլ նախագահն է մայրաքաղաքների Հայոց Եկեղեցեաց հոգարարձուն, իշխան Սիմոն Աբամէլիք-Լազարեանց:

Ծանօթութիւն. Արկեղեցական Խորհրդարանների նախագահի, ինչպէս և հոգարարձուի կոչումն իշխան Աբամէլիք-Լազարեանցի տոհմում անցնում է ցեղից ցեղ արական սեռի մէջ, աւագութեան իրաւունքով, այն անձերին, որոնք Հայաստանեայց Եկեղեցու դասնութիւնն ունին: Աթէ Աբամէլիք-Լա-

զարեանցի իշխանների ժառանգներն անչափահաս լինին՝ մայրաքաղաքների շարք եկեղեցեաց ծխականներին իրաւունք է տրվում՝ ընտրել իրանց մէջից, մինչև **Աքամէլէք**՝ աղաբեանց իշխանների ցեղի աւագ ներկայացուցչի չափահասութեան հասնելը, ժամանակաւոր նախագահներ յիշեալ **Խորհրդարաններին**, իւրաքանչիւր անգամ ոչ աւելի քան երեք տարի ժամանակով: Իսկ երբ **Աքամէլէք**՝ աղաբեանց իշխանների ցեղի ներկայացուցիչը չափահասութեան հասնի՝ ընտրուած ժամանակաւոր նախագահները թողնում են իրանց այս կոչումը, առանց սպասելու ընտրական ժամանակամիջոցի լրանալուն:

3) Բացի խորհրդարանների անդամներից, **Լոսմուց** ժամանակով ընտրվում են իւրաքանչիւր խորհրդարանի համար երկու-երկու փոխանդամ, որոնք անդամների տեղը կանցնին՝ եթէ դէպք լինի սոցա բացակայիլ կամ պայմանաժամից յառաջ դուրս գալ խորհրդարանից: Եթէ դէպք լինի նախագահին բացակայիլ կամ ՚իւսնկանալ՝ իւրաքանչիւր խորհրդարանում պատկանաւոր խորհրդարանի անդամներից մէկը, նախագահի ընտրութեամբ, կանցնի նորա տեղը:

4) Խորհրդարանների ժամանակաւոր նախագահներին, անդամներին և սոցա փոխանդամների ընտրութիւնները կատարվում են ծխականների ընդհանուր ժողովում, ներկայ եղողների ձայների բազմութեամբ, և հաստատվում են թեմակալ առաջնորդից: Այս ժողովներում ձայնի իրաւունք ունին բոլոր արու ծխականները, որոնք 25 տարեկան եղել են, ունին օրինական իրաւահասութիւն հասարակական պարտաւորութիւններ վարելու, և եկեղե-

յու ծխականն են եղել առ նուազն երկու տարի: Ժամանակաւոր նախագահների, անդամների և սոցյալֆոխանդամների պաշտօնին ընտրվում են միայն այն անձերը, որոնք իրաւունք ունին ծխականների ընդհանուր ժողովին ներկայ լինելու: Ընտրութեան ժամանակի և ակզի մասին ծխականներին յայտարարվում է երեք անգամ ծանուցումով եկեղեցում կիրակի օրերը:

5) Խորհրդարանների ընտրուած անդամները և նոցա ֆոխանդամները պաշտօնից դուրս են գալիս երեք տարուց, հերթով, տարեկան մի մի սնորհքայց կարող են նորից ընտրուիլ:

Ծանօթութիւն. Մշակի երկու տարին, մինչև կարգ հաստատուիլը, Խորհրդարանների անդամները դուրս են գալիս վիճակով:

6) Խորհրդարանների նիստերը կայացած են համարուած, երբ նոցա ներկայ են եղել առ նուազն երեք անգամ: Վճիռները որոշվում են ձայների բազմութեամբ. իսկ ձայների հաւասարութեան դէպքում նախագահի կամ ժամանակաւորապէս նորա պաշտօնը վարողի ձայնը առաւելութիւն է տալիս: Խորհրդարանների անդամներից մէկը, կամ յատկապէս նշանակուած ուրիշ մի անձ, վարում են խորհրդարանների արձանագրութիւնները:

7) Խորհրդարանների պարտաւորութեանց շըրջանը մայրաքաղաքների հայոց եկեղեցատաւական ստացուածքների կառավարութեան մէջ, նոցա հաշուապահութիւնը և նոցա զործավարութեանց մանրամասն կարգաւորութիւնը որոշվում են՝ յիշեալ եկեղեցեաց հոգաբարձուի համաձայնութեամբ թե-

մակալ առաջնորդի հետ՝ առանձին հրահանգով, որ կը հաստատէ թեմակալ առաջնորդն, ի նկատի ունենալով զոյութիւն ունեցող օրէնքները:

8) Եկեղեցու անակատական գործերում օգնելու համար՝ խորհրդարաններին ենթարկվում են եկեղեցեաց երեցփոխանները, որոնք գործում են պատկանաւոր խորհրդարանների կողմից հրահանգին համաձայն: Երեցփոխաններ ընտրվում են մայրաքաղաքների հայոց եկեղեցիներից իւրաքանչիւրին համար ծխականների ձեռքով երեք ասորի միջոցով, այն կարգով և իրաւունքներով, որոնք նշանակուած են Սր. հաւ. ԺԱ. հատ. Ա. մասի 1026, 1028 և 1032-րդ յօդուածներում:

9) Յիշեալ եկեղեցեաց գործերին առիթով հարկաւոր դէպքերում հողարարձուն, իրրե եկեղեցական խորհրդարանների նախագահ, ըստ առաջնոյն հարգողացութեան է մանում կառավարչական տեղերին և անձերին հետ: Կառավարչական տեղերն և պաշտօնաւոր անձերն այս հարգողացութեանց մէջ ջոյց են ապլիս օրինական աջակցութիւն:

Բարձրագոյն հրամանով 1885 թ. մայիսի 31-ին հաստատուած՝ նախարարաց Մասնախումբի Կրօն-թեամբ որոշվում է, մայրաքաղաքների հայոց եկեղեցապատկան ստացուածքների կառավարութեան Կանոնների 5-րդ և 8-րդ յօդուածները փոխել հետեւեալ կերպով.

Յօդ. 5) Խորհրդարանների ընտրուած անդամները և նոցա փոխանդամները պաշտօնից զուրս

են գալիս Լուսնակի լրանալուց յետոյ, առաջինները Ներթոյ, ասրին երկու մարդ, իսկ վերջինները՝ նոցա իւրաքանչիւրի ընտրութեան Լուսնակը լրանալուց յետոյ. թէ՛ նոքա և թէ՛ սոքա կարող են նորից ընտրուիլ:

Յօդ. 8) Եկեղեցու անատեսական գործերում՝ օգնելու համար խորհրդարաններին ենթարկւում են եկեղեցեաց երեցփոխանները, որոնք գործում են պատկանաւոր խորհրդարանի կազմած հրահանգին համաձայն: Երեցփոխանները ընտրւում են ծխականներից երեք աստուան համար այն կարգով և իրաւունքներով, որոնք նշանակուած են Սր. ճառ. ԺԱ. հատ. Ա. մասի 1026 և 1032-րդ յօդուածներում:

---

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

**ԲԱՅՄՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՅԱՊԱՏԿԱՆ  
ՍՏԱՅՈՒԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ  
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԻ  
ԿԱՆՈՆՆԵՐԻՆ ՎԵՐԱՅ.

Հաղորդագրուած Նախարարութեան 29-ին հայեւի  
1885 թ., 1460.

1) Որովհետեւ Բարձրագոյն հրամանով 1883 թ. նոյեմբերի 18-ին հաստատուած կանոնների 4-րդ յօդուածին համաձայն, ծխականների ընդհանուր ժողովներում ձայնի իրաւունք ունին այն անձերը, որոնք ծխական են հաշուում առ նուազն երկու տարի՝ ուստի այն հայերը, որոնք մայրաքաղաքում հաստատ բնակութիւն չունին՝ չեն կարող ծխականներ համարուիլ և թէ նոքա երկու տարուան ընթացքում չեն նշանակուած ծխականների ցուցակում և խոստովանողների ցանկում:

2) Բարձրագոյն զպրոցներում ուսանողները չեն կարող համարուիլ հասարակական պարտաւորութիւններ կատարելու օրինական իրաւահաստութիւն ունեցողներ, հիմնուելով Բարձրագոյն հրամանով

1884 թ. օգոստոսի 23-ին հաստատուած Ռուսաց Կայսերական համալսարանների կանոնադրութեան 120-րդ և 123-րդ յօդուածներին վերայ, որոց մէջ հակադրվում են ուսանողներին այն կողմնակի անձերը, որոնք հասարակական որոշ գիրք ունին:

3) Զայնի իրաւունք չունեցող անձերը չեն կարող ընտրութեանց ներկայ գանուիլ, որովհետեւ Բարձրագոյն հրամանով 1883 թ. նոյեմբերի 18-ին հաստատուած կանոնները չեն սահմանադրում, որ ընտրութիւնները գոնբայ լինին. այս լուծիւնից հետեւում է, որ կողմնակի հանդիսականների ներկայութիւնը, որ մի քանի հասարակական ընտրութեանց մէջ թոյլատրվում է օրէնքի աւանձին որոշումով՝ ներկայ գէպքում աւելորդ է համարվում:

4) Որովհետեւ ընտրութեանց ներկայ լինելու շահին օրէնքի արամադրած պայմաններն իրագործելը կարելի է միայն այն գէպքում, երբ եկեղեցական խորհրդարանը հսկէ ընտրողական ժողովի օրինադրեալ կարգի պահպանութեան վրայ՝ սորանից հետեւում է, որ այս խորհրդարանն իրաւունք ունի, կտակածելի գէպքերում, անձանօթ անձերից պահանջելու վաւերաթղթեր՝ համոզուելու համար թէ նոքա իրաւունք ունին ընտրութեանց մասնակցելու:

5) Այս խնդրի լուծումը, թէ խորհրդարանի անգամների ընտրութիւնը քուէարկութեամբ պէտք է անել թէ ամսականերով կախուած է խորհրդարանի հայեցողութիւնից. նա կարող է, պայմաններին համակերպուելով, ընտրել վերոյիշեալ երկու եղանակներից մէկը կամ միւսը, որն աւելի յարմար համարուի:

Հայաստանի Եկեղեցական Նախարարութեան 10-ին հայտնի  
1886 թ., 1906.

Որովհետև օրէնքին համաձայն համընկերական  
հաստատութեանց նիստերը կայացած են համար-  
վում, երբ նոցա մասնակցում են ոչ նուազ քան  
երեք անգամ նախադարձը մէջը հաշուելով՝ ուստի  
այս թիւը բաւական է եկեղեցական խորհրդարան-  
ներին համար:

---

# Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԵՒ ՄՈՍԿՈՒՍԵՐ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ

ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

ԽՈՐՀՐԳԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԵԱՆՅ  
ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ՍՏԱՅՈՍԾՐՔՆԵՐԻ ԿԱՌԱՄԱ-  
ՐՈՒԹԵԱՆ ՄԷՁ, ՆՈՅԱ ՀԱՇՈՒՍՊԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ  
ՆՈՅԱ ԳՈՐԾՍՎԱՐՈՒԹԵԱՆՅ ՄԱՆՐԱՄԱՍՆ  
ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ.

Կաշմարտ ի՛նչ հայրաստաններէ յեղևու կէտընայ  
որայն ժամերէ կառավարութեան Բարչրազայն հրահանով  
1883 թ., նոյեմբերէ 18-ն հասարակարտ խնամներէ 7-րդ  
յօդարտն ինկան հինան վերայ.

ԽՈՐՀՐԳԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 1

Խորհրդարանների պարտաւորութիւններն են՝  
ա) հսկել Եկեղեցապատկան գրամուղուխներին  
և ստացուածքներին վերայ:

բ) Պահել ճիշտ և մանրամասն ցուցակ Եկեղե-  
ցապատկան բոլոր շարժուն և անշարժ ստացուածք-  
ներին, նշանակելով նոցա արժէքը:

Եկեղեցական անօթները, որոնք գործածվում են կրօնական արարչութեան ժամանակ, պահվում են և գանձվում են մի եկեղեցականի նստութեան ասի, որին նշանակում է թեմակալ Առաջնորդը մայրաքաղաքների եկեղեցեաց հարարածուի նամակայնութեամբ: Երբ նորի է լինում գնել նոր զգեստներ կամ զանազան եկեղեցական և ուրիշ իրեզնաներ՝ Խորհրդարաններն պէս մասին պարտաւարաւ շաճ կարգադրութիւն են սնում, նախապէս խորհրդակցելով եկեղեցեաց յաջորդի կամ նոյեւոր կառավարութեան հետ և սոցա շուշանն համեմատ եկեղեցական մաշուած անօթները կամ ուրիշ շարժան ըստացուածքները օձնայնելու, եկեղեցու սեփականութիւնից նանելու կամ ծախելու զէպրութում: Խորհրդարանները պէտք է սնուչա գործեն պատկանաւոր իշխանութեան թոյլատուութեամբ, Օր. հաւ. ԺԱ. հատ. Ա. մասի 1012-րդ, 104. համակայն. ըստ նրաւ. 1857 թ.:

դ) Գանել միջոցներ՝ գրամուղլութներն ըստ կարելոյն կանսնաւոր և յաջոյ աճելոյնելու համար:

զ) Բնակարանների, խանութների և ուրիշ տեղերի վարձաղինը որոշել, ժամանակի և ուրիշ նանգանսների պայմաններին համեմատ:

է) Նշանակել և արձակել ստացուածքների կառավարութեան համար կարեւոր պաշտօնականներ, որոշելով նոցա համարաատաստան սոճիկներ, համակերպուելով թեմակալ Առաջնորդի հաստատած նախահաշուին, և սալով նոցա պաշտօնավարութեան հրահանգներ:

դ) Հակել զործադրութեան և ամերակալութեան վերայ, պաշտանեաներին յանձնուած դումարներէ, ամերներէ և զիւսանադրութեանց պահպանութեան, նոյնպէս և նոցա արուած հրահանգներէ ճիշտ զործադրութեան վերայ:

է) Օժանդակել հայազգի խեղճ ուսանողներին, զանազան հայ բարեգործական և կրթական հաստատութեանց, և խնամել յիշեալ եկեղեցեաց ծխական աղքատ հայերին:

ը) Կազմել իւրաքանչիւր տարուան համար մանրամասն հաշիւ և ներկայացնել այն թեմանկալ Առաջնորդի հաստատութեան:

Մանօմուտներն. Տարեկան հաշիւը, Խորհրդի Կախազահի և բոլոր անդամների ստորագրութեամբ, Արարներնիչ Մասնատնօղոյի նկատողութեանց մատենանի հետ միասին, պետք է ներկայացուի Թեմանկալ Առաջնորդին հաշուետարուան յաջորդող տարուայ ապրիլի 1-ից ոչ ոչ: Այդ հաշիւը, Թեմանկալ Առաջնորդի հաստատուելուց յետոյ, պետք է ազգայնօրէի և բաժանութի ծխականներից ցանկացողներին ի գիտութիւն:

թ) Կազմել իւրաքանչիւր եկող տարուան համար մանրամասն նախահաշիւ ստացուածքների կառավարութեան ելեմուտքին, և ներկայացնել այն թեմանկալ Առաջնորդի հաստատութեան: Եղած բոլոր հոգեորականների սոճիկն յառաջիկայում և սարգում է նոյն քանակութեամբ, ինչպէս որոշուած էր 1883 թ. նոյեմբերի 18-ին Բարձրագոյն Հրամանով հաստատուած Կանոնների հրատարակութիւնից յառաջ: Իսկ հոգեորականների սոճիկն աւելացնել կամ պակասեցնել, կամ ձրի բնակարան և փասեւիք նոցա սալը զապարեցնել կարելի է միայն եկե-

զեղեաց հոգարարձուի նախապէս համաձայնութիւնից յեաց թեմակալ Առաջնորդի հետ և նորս թոյլաութեամբ:

Մանձնութիւն. Առաջաշաբաթ, որին ստորագրած են Խորհրդարանի Առաջագահը և բոլոր անդամները, պէտք է ներկայացուի թեմակալ Առաջնորդին նախաձայնութի տարուան հետեոյ տարուայ զեկտեմբերի 1-ից ոչ ուշ:

§ 2

Խորհրդարանի անդամները, փոխանդամները և եկեղեցեաց երեցփոխանները իրանց պարտաւորութիւնները կատարում են ձրիարար, երեցփոխանները չունին նաև իրաւունք եկեղեցապատկան շինութեանց մէջ ձրի բնակարաններով օգտուելու:

§ 3

Փոխանդամները Խորհրդարանների մէջ պաշտօնավարութեան ևն մանուսմ ծխականների ժողովում նոցա ստացած քուէների առաւելութեան կարգով, Խորհրդարանի հրաւիրանօք: Խորհրդարանն առաջարկում է փոխանդամին անդամի պաշտօնավարութիւնն ստանձնել՝ երբ Խորհրդարանի անդամը ժամանակաւորապէս հեռանայ, կամ հիւանդանոց, կամ անգամութիւնից հեռանայ իւր պայմանաժամը գեւ չլրացած:

§ 4

Խորհրդարանի անդամի պարտաւորութիւնները չեն կարող միաւորուիլ (մէկ անձի մէջ) երեցփոխանների, ասն կառավարիչների և եկեղեցապատկան ստացուարբների կառավարութեան ուրիշ պաշտօ-

նեաների պարտաւորութեանց հետ, որոց գործաւորութիւններն ենթարկուած են Խորհրդարանների անփձական հսկողութեան: Նոյնպէս և Խորհրդարանի անդամները չեն կարող ստանձնել որեւէ կապալ կամ մատակարարութիւն, որ յարարութիւն ունի եկեղեցապատկան ստացուածքների կառավարութեան հետ:

§ 5

Խորհրդարանի անդամները և նոցա փոխարինող փոխանդամները իրանց պարտաւորութիւնները վարում են այս հրահանգին համաձայն: Եթէ պարտազանցութեան զեպքում, եկեղեցին կրէ նիւթական փնաս, այն ժամանակ այդ փնասին պատասխանատու են Խորհրդարանի անդամները՝ նախագահի հետ միասին հաւասար կերպով: Նիւթական պատասխանատուութիւնից հրաժարուող յանցաւոր անդամը մշտապէս զրկուում է մի որեւէ պաշտօնի համար նորից ընտրուելու իրաւունքից: Իսկ եթէ պաշտօնեաները՝ համաձայն Խորհրդարանից նոցա արուած հրահանգներին, կատարեն որէնքի հակառակ գործ, իրանց իշխանութեան շրջանից վեր զեղծում, Խորհրդարաններից նոցա արուած, § 1-ում և զրի տակ յիշուած հրահանգին խախտում — նոքա կենթարկուին ինչպէս անձնական նոյնպէս և ստացուածքային պատասխանատուութեան, որէնքին համաձայն:

§ 6

Անփձական գործաւորութեան և հաշուապահութեան համար Խորհրդարանները կողմնակի ան-

ձերից ընտրում են մի մի քարատուղար, որոնք իրանց բոլոր գործառնութեանց մէջ կախում ունին անմիջապէս Խորհրդարաններից: Քարատուղարի պարտաւորութիւնն է նաև կազմել Խորհրդարանի նիստերի օրացրութիւնները, եթէ սրանք Խորհրդարանի անդամներից ոչ ոք չխմբադրէ:

§ 7

Եկեղեցապատկան զբամազլուխներով և մշանջե-նաւոր աւանդներով գնուած արժէթղթերը պահպանւում են Պետական Գրամատանում:

§ 8

Եկեղեցական զբամարկիները մտնող բոլոր գումարներն յանձնւում են ընթացիկ հաշուով Խորհրդարանների ընտրած զբամատունները, որոնք ապահով վարկ ունին: Ընթացիկ հաշուում եղած գումարները պէտք չէ էջն հաշուող բաշխող աւելի լինին. սորանից դուրս միւս գումարները պէտք է գործածուին գնելու պետական կամ ուրիշ արժէթուղթեր, միայն թէ սոքա ևս պետութիւնից ապահովուած լինին:

§ 9

Եկեղեցապատկան փողերը չեն կարող փոխ արբուիլ ում էլ որ լինի, թէպէտև փոխատութեան պայմաններն եկեղեցու շահերին օգտակար էլ լինին:

§ 10

Տարեկան ծախսերի ընդհանուր գումարը՝ նախահաշուում նշանակուած և հաստատուած գումածից պէտք չէ աւելի լինի: Իսկ եթէ անհրա-

ժեշտ լինի նախահաշուից դուրս ծախս անելու ա-  
ւելի քան ՚ն հաշար ըր-բիլ՝ այսպիսի ծախսին հա-  
մար նախապէս պէտք է խնդրել թեմակալ Առաջ-  
նորդի թոյլտուութիւնը, բացատրելով նորան այդ  
ծախսի կարևորութիւնը: Իսկ նախահաշուից դուրս  
մի հաշար բուրուց պակաս ծախսի համար թոյլ-  
տուութիւն խնդրել հարկաւոր չէ:

§ 11

Խորհրդարանները, եթէ հնարաւոր զանեն, կա-  
րող են եկեղեցապատկան ստացուածքների կառա-  
վարութեան պաշտօնեաներին փոխ ապ, ի հաշիւ  
նոցա ստանալու ուժիկներին, նոցա երեք ամսա-  
կան ուժիկի զուամբից ոչ աւելի: Այս փոխառու-  
թիւնները պէտք է վճարուին առ առաւելն մի  
սարուան ընթացքում, իւրաքանչիւր ամիս փոխ-  
առուի ուժիկից բարձում անելով:

§ 12

Ամեն մի մասակարարութեան և ամեն մի կա-  
պալի համար, որոց զուամարը ՚ն հաշար ըր-բիլ-ց ա-  
ւելի է՝ Խորհրդարանները կապալաւուների պայ-  
մանները և գները քննելուց յետոյ, նոցանից վստա-  
հելի եղողներին ղեա կնքում են օրինական պայմա-  
նագիրներ, որոց մէջ պայմանաւորվում են այն բո-  
լոր զիպուածները, որոնք կարող են ըստ ամենայնի  
ապահովել եկեղեցական շահերը: Բացի այս՝ կա-  
պալներն ու մասակարարութիւնները պէտք է ա-  
պահովուին կապալաւուների կողմից համապատաս-  
խան զբաւականներով, կապալադինի առ շահուն ՚ն  
էրրրր մասով, որ պիտի կայանայ կամ արժե-

A 566



թուղթներից, համաձայն գանձային նախարարութեան սահազնին, կամ առձեռն գրամից: Այսպիսի պայմանադիրներ կարող են կապուիլ և հազար բարլուց նուազ զուամարի կապալներին համար ևս:

§ 13

Եկեղեցասպասկան բնակարանները վարձով աալու, նոյնպէս և կապալների պայմանադիրները կրնք վում են առ առաւելն երեք տարուան ժամանակամիջոցով: Բայց այն դիպուածներում, երբ եկեղեցու օգուան սկներև է՝ Խորհրդարանները կարող են կնքել պայմանադիրներ և աւելի բնգարձուկ ժամանակամիջոցով, Բայց ոչ աւելի քան տասն տարով: Պայմանադիրներում պէտք է յիշուի աների նորոգութեան կարելութիւնը, որպէս զի եկեղեցասպասկան ստացուածքների կառավարութիւնն այսպիսի դէպքերում վարձկալների կողմից արգելքի չհանդիպի:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՆԻՍՏԵՐԸ

§ 14

Խորհրդարանի նախագահը, կամ նորա ցուցմամբ, նորա պաշտանը վարող անձը, գործերի քանակութեան և յատկութեան համակերպելով, նշանակում է Խորհրդարանի նիստերի օրն ու ժամը, որը յայտնում է անդամներին և, հարկաւոր ժամանակ, փոխանդամներին ծանուցադիրներով:

Խորհրդարանի նիստերը սովորաբար աւղի պիտի ունենան ամիսն երկու անգամ, այսինքն իւրա-

քանչիւր ամսի 12-ին և 25-ին, երեկոյեան 8 ժամին: Եթէ նիստի օրը փոփոխել հարկ լինի՝ այս մասին ծանուցադիրներ են յուղարկվում մէկ օր յառաջ:

§ 15

Խորհրդարանների անդամներից և փոխանդամներից ոչ ոք իրաւունք չունի խոյս տալ նիստերին ներկայ լինելուց, ժամանակ չունենալու, ձերութեան կամ շարունակ հիւանդութեան պատճառանքով: Նա որ իրան անկարող է զգում իւր պարտաւորութիւնները կատարելու՝ պէտք է խընդրէ որ բոլորովին հրաժարուի եկեղեցական Խորհրդարանի անդամութիւնից: Նմանապէս Խորհրդարանի անդամներից ոչ ոք իրաւունք չունի հաշիւներին ստորագրելուց հրաժարուել: Ստորագրուելուց հրաժարուել՝ նշանակում է հեռանալ անդամութեան պարտականութիւնից: Այսպիսի գէպքերում այսպիսի անդամի իրանցից հեռանալու մասին Խորհրդարանը իսկոյն և եթ յայտնում է թեմակալ Առաջնորդին:

§ 16

Եթէ Խորհրդարանի անդամը հիւանդ լինի կամ ժամանակաւորապէս հեռանալու լինի քաղաքից՝ պէտք է այս մասին աեղեկութիւն ապ Խորհրդարանի նախագահին:

§ 17

Նշանակուած օրը Խորհրդարանի նիստը բաց է անում նախագահը: Իսկ եթէ ներկայ եղող անդամների թիւը օրինական թուից պակաս լինի,

(տես Բարձրագոյն Նրամանօյ 1883 թ. Նաստատուած Կանոնների 6-րդ յօդուածը) նիստն այս գէպքում Նամարվում է չկայացած: Այս մասին կազմվում է օրագիր, որը ստորագրում են Նախագահն և ներկայ եղող անդամները. իսկ յաջորդ նիստին նոյն օրագիրն ստորագրում են և այն անդամները, որոնք բացակայ են եղել չկայացած նիստից:

§ 18

Նիստը բացուելուց յետոյ նախ և յառաջ կարգացվում է նախօրոյ նիստի օրագրութիւնն և Նաստավում է Խորհրդարանի անդամների ստորագրութեամբ, եթէ այս օրագիրը կազմուած և ստորագրուած չլինի նախօրոյ նիստում: Յետոյ սկսվում է ընթացիկ գործերի քննութիւնը:

§ 19

Նիստերում գործերի զեկուցումն անում է Խորհրդարանի քարտուղարն առանձին ձեւով թիւերի վերայ, որոնք կոչվում են «զեկուցման յուշակ»:

§ 20

Խորհրդարանների ամեն մի նիստի Նամար, և Նարխուօր գէպքերում նիստերում քննուած ամեն մի գործի Նամար կազմվում են օրագրութիւններ, որոնք ստորագրում են Նախագահը կամ նախագահողը և անդամներն, և վաւերագրում է քարտուղարը:

§ 21

Խորհրդարանի անդամներն իրանց առաջարկութիւնները կամ յայտարարութիւնները զբաւոր մասուցանում են Նախագահին կամ նախագահո-

դին, կամ թէ անում են բերանացի՝ նիստի ժամանակ, վերջին գէպքում նոքա օրագիր են անցվում: Այս յայտարարութիւնները կամ իսկոյն տնջում են քննութեան կամ յետաձգվում են յաջորդ նիստին քննուելու, միայն թէ նոյն առաջարկութիւնն անողի ներկայութեամբ:

§ 22

Նիստին ներկայ եղող անդամը ոչ մի պատճառով չէ կարող չրաժարուիլ իւր ձայնը տալուց նիստում քննուող գործերի մասին:

§ 23

Խորհրդարանների նիստերում չեն կարող քննութեան առնուիլ սյնպիսի խնդիրներ, որոնք սեփական եկեղեցապահան ստացուածքների կառավարութեան և նոյա վերաբերեալ գործերին չեա յարաբերութիւն չունին, Նամանայն Բարձրագոյն Նրամնով 1883 թ. հաստատուած Կանոններին:

## ԹԽԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

§ 24

Ծխականների ընդհանուր ժողովն հրաւիրում են եկեղեցական Խորհրդարաններն ամեն տարի մէկ անգամ, ոչ ուշ քան ապրիլ ամսում կամ մայիսի սկզբներում, ընտրելու համար անդամներ, փոխանդամներ նոյնպէս և եկեղեցու երեցփոխաններ:

Մանսնոմին. Մայրաքաղաքների եկեղեցեաց Լոգաբարձուի և մայրաքաղաքների եկեղեցական Խորհրդարանների Ախտագահի մահուան գէպքում

Տրաւիրում է ծխականների արտակարգ ժողով համաձայն Բարձրագոյն հրամանով հաստատուած կանոնների 2-րդ յօդուածի ծանօթութեան:

§ 25

§ 24-ում նշանակուած պաշտօնեաների ընտրութիւնը կատարվում է այն պայմանով լրանալուց յետոյ, որ նշանակուած է Բարձրագոյն հրամանով հաստատուած կանոններին մէջ:

§ 26

Ընդհանուր ժողովին հրաւիրում են ծխականները՝ եկեղեցում երեք անգամ ծանուցումով կիրակի օրերն, արարողութեան վերջանալուց յետոյ, որի մէջ յայտնվում է ընտրութեան օրն ու տեղը երրորդ ծանուցումը պիտի լինի ընդհանուր ժողովի օրից մի շաբաթ յառաջ:

§ 27

Ընդհանուր ժողովի ժամանակի և տեղի մասին եկեղեցեաց հոգաբարձուն յայտնում է պ. Քաղաքապետին, պ. Առաջ-օտարկանապետին և քաղաքաբաժնի ոտարկանին:

§ 28

Ընդհանուր ժողովից յառաջ եկեղեցական Խորհրդարանները պատրաստում են հայերէն և ռուսերէն լեզուներով սյրբենական կարգով ձայնի իրաւունք ունեցող այն ծխականների ցանկը, որոնք հասցէի գրքում գրել են իրանց անունը, հայրանունն և տղանունը և ուրիշ տեղեկութիւններ, համաձայն գրքի վերագիրներին:

Խորհրդարանները այն ցուցակները հաստատում են և տպագրել տալով յուղարկում են ծխական-

ների հասցէներով: Յիշեալ ցանկերին հետ յուզարկ-  
վում են ծխականներին և տպուած ծանուցադիր-  
ներ ընդհանուր ժողովի ժամանակի և տեղի մա-  
սին: Այս ծանուցադիրներն համարվում են և ընդ-  
հանուր ժողովի մուտքի տոմսակ:

Ծանօթութիւն. հարուած ծանուցագիր չտալողները  
ընդհանուր ժողովը կարող են մանել միայն այն  
ղեկորում, եթէ նոցա իրաւահասութիւնը նշանակ-  
ուած է հասցէի գրքում և հաստատուած է Խոր-  
հրդարանից:

§ 29

Ընդհանուր ժողովին ներկայ եղողներին թիւը  
որոշվում է ներկայացուած մուտքի տոմսակների  
թուով:

§ 30

Ընդհանուր ժողովը մանելիս ամեն մի ծխական  
ստանում է մի մի ձեւաթուղթ, նշանակելու համար  
նորա վերայ իւր առաջարկելու ընտրելիների ա-  
նուններն ու ազգանունները:

§ 31

Եկեղեցական խորհրդարանները ծխականների  
ընդհանուր ժողովներին մասնակցելու իրաւահա-  
սութիւնը որոշելիս՝ առաջնորդվում են Բարձրա-  
դոյն հրամանով շաստատուած 1883 թ. Կանոնե-  
րի 4-րդ յօդուածով և ներքին Գործոց նախարա-  
րութեան այն Կանոնների մասին աուած բացա-  
րութեամբ:

§ 32

Ընդհանուր ժողովի օրինաւոր կարգապահու-  
թեան վերայ հսկում է Խորհրդարանը (շամուձայն

1885 թ. մարտի 29-ի № 1460 կ. 4. նախարարութեան բացառութեան): Այս պատճառով Խորհրդարանի նախագահի և նրա ոչ պակաս քան երկու անդամների ներկայութիւնը ընդհանուր ժողովի բոլոր անդրութեան ժամանակ անհրաժեշտ պայման է, որ ընդհանուր ժողովը կայացած և կանոնաւոր նամարուի:

§ 33

Նշանակուած օրին ու ժամին ժողովը բաց է անում մայրաքաղաքների հայոց եկեղեցեաց հոգաբարձուն, որ և նախադաճում է ընդհանուր ժողովում: Եթէ մայրաքաղաքների եկեղեցեաց հոգաբարձուն և խորհրդարանների նախագահը որեիցէ պատճառով չէ կարող նախագահել ընդհանուր ժողովին՝ ծխականներին է թողնում ընտրել իւր փոխանակ այն ժողովին նախագահող:

§ 34

Քարտուղարի պաշտօնն ընդհանուր ժողովում վարում է Խորհրդարանի քարտուղարը:

§ 35

Ընդհանուր ժողովի բացուելուց յետոյ մայրաքաղաքների եկեղեցեաց հոգաբարձուն կամ ընտրուած նախագահողը, յայտնելով Խորհրդարանից զուրս եկող անդամների և փոխանդամների, նոյնպէս և երեյփոխանների անունները, բացաարում է, որ զուրս եկածները կարող են նորից ընտրուիլ յետոյ հրաւիրում է ժողովականներին ստուգելու ներկայ եղող ծխականների թիւը (§ 29), և յետոյ ընտրութիւնն սկսելու, § 37-րդում նշանակուած կարգով:

§ 36

Ներկայ եղողների թիւը որոշելուց յետոյ հօգա-  
րարձուն կամ նախադանդին հրամայում է այլ ևս  
ժողովը ներս չձեռնել ուշացածներին:

§ 37

Ծխականներին բաժանուած և նոյսնից ներ-  
կայացուած ձեւթղթերի քանակութիւնն ստու-  
գուելով կազմվում է ցուցակ այն անձերիս, որոնք  
պիտի ենթարկուին ընտրողական քուէարկութեան:  
Քուէառուփները զննվում են և շարվում են կարգով  
և նոյա վերայ զրվում են ընտրողների անուններն  
և ազգանունները, սոցա ստացած ձայների առա-  
ւելութեան կարգով: Յետոյ նախադանդը կոչում է  
ընտրողներին, որոնք իւրաքանչիւր քուէառուփի  
մօտ ստանում են մի մի քուէ (դնդակ) և ձգում  
են քուէառուփի այս կամ այն բաժանմունքը («պեր»  
կամ «պէմ»): Իւրաքանչիւր քուէառուփի մօտ պէտք  
է լինի այնքան քուէ, որքան որ ծխականներ ներ-  
կայ են ժողովին, և այն քուէն, որ ստանում է  
ծխականը մի քուէառուփի մօտ՝ պէտք է անշուշտ  
ձգէ նոյն քուէառուփը. բայց ամենևին թոյլ չէ  
տրվում, որ մի քանի քուէառուփների մօտ ստաց-  
ուած քուէները մի քուէառուփ ձգուին: Քուէար-  
կութեան վերջանալուց յետոյ ներկայ եղող ծխա-  
կաններից հրաւիրում են երեք մարդ՝ ստուգելու  
և նշանակելու ստացուած ղեակները. իսկ քուէ-  
ները համրում է ընդհանուր ժողովի նախադանդը,  
ժողովականների առջև:

Իւրաքանչիւր քուէառուփի մէջ եղած ընտրո-  
ղական և ոչ-ընտրողական քուէների թիւն աւելի

պիտի չլինի ներկայ եղող ընտրողների թուից. նա-  
կառակ գէպքում այն ընտրուածն են թարկւում է  
վերաբուէարկութեան:

Մանսնումին. Եթէ ապագայում գտնուի քուէար-  
կութեան աւելի յարմար եղանակ՝ ընդհանուր ժո-  
ղովք կարող է նորանով անել ընտրութիւնները:

§ 38

Ընտրուած է համարուում այն անձը, որ ստա-  
նում է ձայների բազմութիւն, որ հաշուում է ընտ-  
րողական քուէների նամեմատութեամբ ժողովին  
ներկայ եղող ծխականների ընդհանուր թուին հետ:

§ 39

Եթէ ընտրուի ընդհանուր ժողովից բացակայ  
եղող մի ծխական և եթէ նա հրաժարուի՝ նորա  
տեղը ընտրւում է ժողովին ներկայ եղող փոխանդամը:

§ 40

Ընդհանուր ժողովում ներկայ չեղող, բայց ընդ-  
հանուր ժողովում ընտրուած անձը՝ պարտաւոր է  
եօթն ատուր միջոցում յայտնել եկեղեցական Խոր-  
հրդարանի նախագահին իւր համաձայնութիւնը,  
կամ անհամաձայնութիւնն իւր ընտրութեան մա-  
սին: Եթէ նա ոչինչ չյայտնէ՝ սա կհամարուի նո-  
րա կողմից մերժում:

§ 41

Ընդհանուր ժողովի որոշումները, ընտրութեան  
կարգի և կառարման մասին, օրացիք ևն անցնում,  
որը ստորագրում են ընդհանուր ժողովի նախագա-  
հը, Խորհրդարանի անդամները և ընդհանուր ժո-  
ղովին ներկայ եղող ծխականներից յանկացողները:

§ 42

Քանի որ ընդհանուր ժողովները զուամրվում են միմիայն պաշտօնատար անձանց ընտրութեան համար, այդ պատճառով ընդհանուր ժողովին նախագահողը պարտաւոր է թոյլ չտալ քննութեան առնելու այնպիսի հարցեր, որոնք ընտրութիւններին չեն վերաբերում: Եթէ այս կարգը չի պահպանում ժողովը համարվում է անկանոն, չկայացած և այդ ժողովում կայացած ընտրութիւնները անկանոն (տես Նախար. բացատր. 1888 թ. մայիսի 23-ի, № 2681):

§ 43

Նախագահը, ընդհանուր ժողովի անդամների դորձած անկանոնութեան և իւր՝ կարգը վերահանգնելու համար արած անյաջող աշխատանքի գէպքում, պարտաւոր է ժողովը փակել՝ մինչև անգամ դեռ ևս ընտրութիւնները չկայացած:

§ 44

Ժողովը չկայացած գէպքում Խորհրդարանը, § 26 հրահանգում նախատեսնուած կարգի համաձայն, նշանակում է մի ուրիշ ժողով: Եթէ ընտրութիւնները երկրորդ անգամն էլ չեն կայանում, այն ժամանակ Խորհրդարանը հոգաբարձուի միջոցաւ այդ յանձնում է թեմակալ առաջնորդի բարեհայեցողութեան՝ սպասելով նրա կարգապրութեանը:

§ 45

Ընդհանուր ժողովում տեղի ունեցած անկանոնութեանց մասին զիտողութիւններ կարող են հազորուել եկեղեցական Խորհրդարաններին ընտրութիւնից յետոյ ութ օրուան ընթացքում:

Վորճրդարանը քննութեան աննելով այս գիտութիւնները՝ ներկայացնում է նրանց թեմակալ Առաջնորդին իւր որոշումով հանդերձ նոցա մասին:

§ 46

Եկեղեցիների հոգարարձուն Վորճրդարանից ստանալով ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, ընտրուածներին ներկայացնում է թեմակալ Առաջնորդին ի հաստատութիւն՝ ընդ սմին ներկայացնելով այդ ժողովում կանոնաւոր կերպով կատարուած ընտրութիւնների մասին Վորճրդարանի արած եզրակացութիւնն ևս. ընտրուածները պաշտօնի մէջ են մանում իրանց հաստատուելուց յետոյ, որի մասին հաղորդում է հոգարարձուն:

§ 47

Եթէ ծխականները եկեղեցապատկան ստացուածքների օգտին համար պէտք են համարում որեէ առաջարկութիւն կամ յայտարարութիւն անել՝ այս անում են ընդհանուր ժողովից զուրս եկեղեցական Վորճրդարաններին զրաւոր կերպով: Եթէ այս զրաւոր առաջարկութիւններն ստորադրուած են առ նուազն 30 իրաւահաս ծխականներից՝ Վորճրդարաններն իրանց որոշումը նոցա մասին հաղորդում են ստորադրոյնների հաւատարմատարին միջոցով, և Վորճրդարանի այս որոշման պատճէնն յուղարկում են թեմակալ Առաջնորդին ի գիտութիւն և ի պարտուպատշաճ անօրէնութիւն:

## ՀԱՇՈՒՍՊԱՀՈՒԹԻՒՆ

### § 48

Եկեղեցական Խորհրդարանները սոմարներն և հաշիւները պահում են այնպէս, որ սաւեն ժամանակ նոքա պարունակէն լիակատար ու ճիշտ տեղեկութիւններ պատրաստ գրամագլուխների, եկեղեցւոյական ստացուածքների կառավարութեան ելեմուտքի, այնպէս և եկեղեցւոյական շարժուն և անշարժ ստացուածքների վիճակի մասին:

### § 49

Ամեն տիս, ոչ ուշ քան ամսի 12-ին, Խորհրդարանները քննում են ելեմուտքի հաշուեկշիռը, ստուգում են գրամարկի առձեռն դումարը, և այն հաշուեկշիռը վաւերացնում են իրանց ստորագրութեամբ:

### § 50

Իւրաքանչիւր ամսուան համար, ոչ ուշ քան ամսի 4-ին, եկեղեցու երկրփոխանը, աների կառավարին ու գերեզմանատան եկեղեցու և նորա մօտ գտնուած տան վերակացուն ներկայացնում են բոլոր մանրամասն տեղեկութիւնները՝ այն ամսում ստացուած մուտքի և նոցա արած կամ Խորհրդարանից թողարտուած ծախսերի մասին, որոնք պէտք է ունենան հաւատարմացնող թղթեր: Քարտուղարը բոլոր այս տեղեկութիւններն ստուգում է, գասաւորում է և մոյցնում է պաականաւոր ատմարները, և հաշուային ամսու հաշուեկշիռին հետ ներկայացնում է Խորհրդարանի քննութեան և հաստատութեան:

§ 51

Հաշուային ամսում քաղաքի և գերեզմանատան  
եկեղեցիներից և աներից երեցփոխանի և գերեզ-  
մանատան եկեղեցու վերակայուի ձևաքով ստաց-  
ուած բոլոր հասոյթներն յանձնվում են եկեղեցա-  
պատկան աների կառավարիչներին, սոցանից ստա-  
ցադիր աւնուելով. իսկ սոքա իրանց յանձնուած  
գումարներն իսկոյն գնում են ընթացիկ հաշուով  
Խորհրդարանի ցոյց աուած զբամասուներ, բնակա-  
բաններից նոյն ամսում հետզհետէ ստացուած գու-  
մարներին հետ:

Կէսն այն հասոյթներից, որ ստանում են եկեղե-  
ցիները կրօնական արարողութեանց—մկրտութեան,  
պսակի, թագման, հոգեհանգստի համար, Խորհրդ-  
արանները, բոլոր հայոց եկեղեցեաց մէջ զոյու-  
թիւն ունեցող կարգին համաձայն, խւրաքանչիւր  
ամսի վերջին պարտաւոր են յուղարկել իրանց վի-  
ճակի կոնսիստորիան, տեղական հոգևոր կառավա-  
րութեան միջոցով:

Բացի սորանից այլևայլ կամաւոր նուիրատուու-  
թիւններ առանձին զրքերով էլեղեցոց Գ՝-Գ՝ բայց  
յօզուա նորա՝ կարող են տեղի ունենալ ոչ այլա-  
պէս, բայց եթէ պատկանաւոր իշխանութեան  
թոյլտուութեամբ, համաձայն Սր. հաւ. ԺՍ. հատ.  
Ա. մասի 1014 յօդ., ըստ հրատ. 1857 թ.:

§ 52

Տների կառավարիչներն առանց Խորհրդարանի  
թոյլտուութեան ոչ մի դէպքում իրաւունք չունին

իրանց մօտ պահելու բնակարաններից կամ արգիւնքի ուրիշ աղբիւրներից նոցա ձեռքն հասած փողերը:

§ 53

Բոլոր այն հաշիւները, որոնցով պէտք է վճարումներն անել՝ իւրաքանչիւր ամսի 20-ին ներկայացնում են Խորհրդարանին Լեյզիօխանը, աների կառավարիչն և ղերեզմանատան եկեղեցու վերակացուն: Այս հաշիւները պարտուպատշաճ ստորագրութեամբ պէտք է վաւերացուած լինի՝ թէ նոցա մէջ նշանակուած առարկաներն յիշուի ստացուած են և աշխատութիւնները կատարուած:

§ 54

§ 53-րդում յիշուած հաշիւներին համաձայն Խորհրդարանի քարտուղարը պատրաստում է վճարային թերթեր և առանձին ցուցակով ներկայացնում է հաստատութեան Խորհրդարանի նիստին, ոչ ուշ քան ամսի 25 ին: Նոյն միջոցին ներկայացվում են և հոգեորականներին ու ծառայողներին վարձքը վճարելու համար կազմուած պահանջադիրները: Այս վճարային թերթերին վերայ մակագրում է նախագահը և նշանակում է չէկի համարը, և իւրաքանչիւրին վերայ առանձին գրում է՝ «վճարել»: Երբ այս թերթերով վճարքները կատարուին, որի մասին ստացողներն ստորագրում են նոցա վերայ՝ նոքա մանուկ են եկեղեցական Խորհրդարանի ղեւանագրութեանց մէջ:

§ 55

Առանց Խորհրդարանի թոյլտուութեան չէ կարելի անել ոչ մի ծախս, բացի մանր ծախսերից,

որոց համար Խորհրդարանը կանխապէս տալիս է որոշեալ գումարներ:

§ 56

Մանր ծախսերի համար կանխապէս դրամ ստացող պաշտօնեաները պարտաւոր են, այդ ծախսերն անելուց յետոյ, Խորհրդարանին ներկայացնել արած ծախսերին մանրամասն հաշիւը, նոցա հաւատարմացնող թղթերով հանդերձ: Սրանք ստուգելուց յետոյ Խորհրդարանն, եթէ հարկ լինի, նորից անօրինում է կանխապէս դրամ տալ:

§ 57

Այն հաշիւների վճարումը, որոնք հաստատուած են Խորհուրդներից, պայմանադիրներով, պայմաններով և օրադիրներով վճարային թերթերի վերայ թողլատրում է նախապահ, և վաւերացրում է քարտուղարը: Իւրաքանչիւր վճարային թերթի կցուած պէտք է լինին՝ պարտուպատշաճ կարգով վաւերացրած հաշիւներ, իբրև ապացոյց, թէ մասակարարութիւնը, կապալը կամ միւս աշխատութիւններն յիրուի կատարուած են: Իսկ ուրիշ աեսակ էլքերի կամ ծախսերի, որոնք թողլատրվում են Խորհրդարանից՝ վճարային թերթերն՝ վճարելու համար ստորագրվում են Խորհրդարանում ներկայ եղող անդամներից:

§ 58

Վճարային թերթերով վճարելու համար Խորհրդարանն ամեն անգամ թողլատրում է՝ աների կառավարչին չէկ տալ՝ ընթացիկ հաշուից փող ստանալու համար: Իսկ մոմսվաճառութիւնից, ու-

րիչ ազրիւրներից և եկեղեցական դանձանակից  
դոյացած դումարներով չէ կարելի վճարքներ անել,  
թէպէտև սոքա թոյլատրված լինին Խորհրդարա-  
նից. նոյա համար կամ կանխապէս զրամ է արվում  
կամ առանձին չէկ:

§ 59

Հաշուային տարին սկսվում է Յունվարի 1-ից:

§ 60

Եկեղեցապատական ստացուածքների կառավարու-  
թեան հաշիւը պէտք է բովանդակէ հետևեալ չրլ-  
խաւոր զլուխները.

1) Մուտքի չէջ.

ա) Մուտք քաղաքի և գերեզմանատան եկեղե-  
ցիներից, ինչպէս՝ արգիւնք մոմաւաճառութիւնից,  
հարսանիքի և թաղման ժանանակ եկեղեցու լուսա-  
ւորութիւնից, եկեղեցապատական դադողի-ծած-  
կոյթների գործածութիւնից, տանը և եկեղեցում  
կատարուած հոգեհանդիսաներից և մկրտութեան  
ուսաղանից. բ) Մուտք քաղաքի տանից. վարձք  
բնակարաններից, խանութներից և ուրիշ աեղերից,  
որոնք բնակարաններից անկախ են. տներում գարն-  
ուած մաշուած իրեղէնների վաճառումից. առկոս-  
ներից, որոնք ստացվում են եկեղեցապատական զրա-  
մազլուխներից և ընթացիկ հաշուով արուած դու-  
մարներից, նոյնպէս և տան անաեութեան մէջ  
աեղի ունեցող պատահական եկամուտներից:

2) Ելքի չէջ.

ա) Մուտք քաղաքի և գերեզմանատան եկեղե-  
ցեաց վերայ, ինչպէս պահպանութիւն հոգեւոր կա-

աւարութեանց, հողեօրականներին և եկեղեցական պաշտօնեաներին, նպաստ նոցա պրիններին. հրդեհից ապահովադրութիւն, եկեղեցու վառելիք և լուսաւորութիւն, նորոգութիւն եկեղեցեաց և եկեղեցական անօթների, և ուրիշ մանր ծախսեր. բ) Բաղաքի և գերեզմանատան տներին վերայ. պահպանութիւն պաշտօնեաներին և ուրիշ անձերին, նպաստ և պարգևներ, ապահովադրութիւն, վառելիք, լուսաւորութիւն, ջուր, նորոգութիւն և պահպանութիւն գազի ջրի և խողովակներին, աների և սալաշատակների նորոգութիւն. սեւական հարկ և գնահատութեան տուրք. ծխնելոյղների մաքրութիւն, սղրիւսի և փոշու արտահանութիւն, Խորհրդարանների գրասենեակի պիտոյքներ, և ուրիշ մանր շնտախտեսուած ծախսեր. գ) Հնգհանուր ծախսեր. «եկեղեցական» կոչուած թոշակաւորները կազարեան ձեւմարանում: Պետերբուրգի Խորհրդարանի մասնակցութիւնը մի քանի ուսումնարանների պահպանութեան, նպաստ Ս.-Պետերբուրգում ուսանողներին և նպաստ մոյրաքաղաքներն եկող աղքատներին, և նրանց և ուրիշ աղքատներին հայրենիք յուղարկելու ծախս, հիւանդանոցներում մեռած անկարող հանգուցեալների թաղում:

3) Սոցանից յետոյ հաշուին մեջ (հաշուեկշռում պէտք է յոյց արուին. Պահանջէն Ի՛նջ.

ա) Իրամարկղի հաշիւը, սյսինքն յաջօրդոյ յունվարի 1-ին գրամարկղում առձեռն պատրաստ գումարը. բ) հաշիւը նիթացիկ հաշիւների. գ) Եկեղեցապատկան արժէթղթերի հաշիւը (նշանակելով թղթերի արժէքը վերջին հաշուի կազմուելուն

նախընթաց շուկայի գներով և եկեղ'ցական տոմարների հաշուով), նանդերձ նոյա անուանական գներով, դ) հաշիւ անշարժ կայուածքների, իւրաքանչիւր շինութեան արժէքն առանձին, դուրս գալով նորանից 2<sup>0</sup>/<sub>0</sub> վճարում: ե) հաշիւ շարժուն ստացուածքների, նոյա արժէքով նանդերձ, դուրս գալով տարեկան 10<sup>0</sup>/<sub>0</sub> վճարում: զ) հաշիւ զանազան պարտապանների, հաստատութեանց և անձերի. է) հաշիւ կամ ցուցակ դրաւականների, որ առնուած են կապալառուներից կամ մատակարարներից տոկոսարեւ թղթերով կամ պարտաս պրամով, և ը) Յուցակ յաջորդող յունվարի 1-ին մնացած փայտին, մամերին, ձէթին, ձէտթղթերին, գրելու թղթերին, և այլն: Աւարտելն էլ: ա) հաշիւ եկեղեցապատկան դրամագլուխներին, նախորդ տարում գոյացած արդիւնքներով նանդերձ, բ) հաշիւ մշանջենաւոր աւանդներին, որոնք որոշեալ նպատակներով նուիրել են զանազան անձեր իրանց կտակներով, գ) հաշիւ զանազան պարտատէրների, այսինքն այն զուամարներին, որոնք պարտաւոր են եկեղեցիները վճարել զանազան հաստատութեանց և անձերի, և զն վճարել այն հաշիւները հաշուային տարում, նոյնպէս և հոգեւորականներին և ուրիշ պաշտօնեաներին հաշուային տարում չվճարուած ոտճիկների. նաև հաշիւ այն զուամարներին, որոնք վարձկալները վճարել են կանխաւ, յաջորդող տարուան հաշուին, և դ) հաշիւ շահի և վնասի (խկական շահ հաշուային տարում):

§ 61

Անվտասհէլի պարտքերը տարեկան հաշուեկշիւներում պէտք է նշանակուած լինին մօտաւոր թուերով. իսկ եկեղեցապատկան տոկոսարեր թրղթերի արժէքները պէտք է նշանակուած լինին ոչ բարձր այն գնից, որով գնուած են:

ԳՈՐԾԱՒԱՐՈՒԹԻՒՆ

§ 62

Խորհրդարանը մտած բոլոր թղթերին վերայ, նրանց բանալուց կամ ընդունելուց յետոյ, քարտուղարը մակադրում է նոցա մանելու տարին, ամիսն և օրը և համարն ըստ կարգին:

§ 63

Ստացուած թղթերը մացվում են մտեալ թղթոց տամարը, որակը նշանակվում են, ստացման կարգով, իւրաքանչիւր թղթի համառօտ բովանդակութիւնը, տարին, ամիսն, օրը, համարը և անունն այն հաստատութեան կամ անձին, որից ստացուած է. այս տամարում նշանակվում են և ելեալ թղթերի համարները:

§ 64

Մտեալ թղթերը տամար մացնուելուց յետոյ (§ 63) ներկայացվում են Խորհրդարանների նախագահին, որ մակադրում է նոցա վերայ:

§ 65

Նախագահը երբ քննութեան առնէ մտեալ թրղթերը և նոցա վերաբերեալ բացատրութիւնները՝

այնուհետեւ նոցա մասին կազմվում է զեկուցման թերթ:

§ 66

Զեկուցման թերթը պէտք է պարունակէ թըղթերի բովանդակութիւնը և հարկաւոր աեզեկութիւններ ու բացատրութիւններ այն դործի մասին, որ նախորդ նիստին քննուած չէ եղել: Իսկ անկամների բերանացի առաջարկութիւնները զեկուցման թերթը մոցվում են նիստի ժամանակ:

§ 67

Կողմնակի անձերի բերանացի խնդիրները լավում են Վորհրդարանի նիստի ժամանակ, և նոյն ժամանակ մոցվում են զեկուցման թերթը՝ քննուելու համար:

§ 68

Զեկուցման թերթը պատրաստուելուց յետոյ առաջարկվում է Վորհրդարանի յաջորդ նիստին՝ վճռուելու համար:

§ 69

Վորհրդարանի որոշումը իւրաքանչիւր դործի մասին, նիստին ժամանակ նախագահը համառօտապէս մակագրում է զեկուցման թերթին վերայ այն բաժնում, որ վերագիր օւնի «Վորհրդարանի որոշում»:

§ 70

Զեկուցումը կայանում է դործի ընթերցման և քննութեան մէջ, որի ժամանակ զեկուցանողն հարկաւոր գէպքերում ապիս է բերանացի բացատրութիւններ:

§ 71

Գործերը զեկուցման թերթով հետզհետէ քննուելիս և որոշուելիս՝ կազմվում է արձանագրութիւն, որի մէջ նշանակվում են նիստի թիւը, ներկայ եղող անդամների անունները, գործերի բովանդակութիւնը, վճիռը և զեր ու զէմ ձայները:

§ 72

Արձանագրութիւնը կազմվում է նիստին ժամանակ. իսկ եթէ, հնարաւոր չէ լինում գործերի հետզհետէ քննուելիս կազմել և արձանագրութիւն՝ սա կազմվում է յետոյ և սեպտուբրեմբեր յուղարկվում է անդամներին ի գիտողութիւն: Յաջորդ նիստում կարգադրվում և ստորագրվում է այն Խորհրդարանի անդամներից:

§ 73

Եթէ արձանագրութիւնը կազմուած չէ նիստի ժամանակ, իսկ մի քանի գործեր անհրաժեշտ պահանջում են իսկոյն գործադրութիւն՝ այսպիսի գործերը Խորհրդարանից վճռուելով՝ ստորագրվում են անդամներից նոյն իսկ զեկուցման թերթին վերայ:

§ 74

Խորհրդարանի անդամներն իրաւունք չունին իրանց ի գիտութիւն յուղարկուած նախորդ նիստի արձանագրութեանց մէջ փոփոխել իրանց յայտնած մտքերը: Եթէ մէկը նկատէ, որ իւր կարծիքը ճիշտ չէ արձանագրուած քարտուղարից՝ նա իրաւունք ունի յաջորդ նիստում պահանջելու, որ աւելի ճիշտ արձանագրուի այն. թէ այս գէպքում ան-

դամները ստրաձայն լինին՝ նորա պահանջը վճարում է ձայների բազմութեամբ:

§ 75

Ստորագրութեան համար պատրաստուած արձանագրութեանց մէջ թող չէ արվում ուղղագրութիւններ անել կամ մի բան քերել: Իսկ եթէ անհրաժեշտ պատճառով սա տեղի ունենայ՝ արձանագրութեան վերջում, ստորագրութիւններից յառաջ, պէտք է յիշուի այս մասին:

§ 76

Արձանագրութիւնները զրվում են յօդուած յօդուած և ըստ կարելոյն բացայայտ:

§ 77

Արձանագրութիւնները անդամների ստորագրելուց յետոյ, պէտք է, համաձայն նոցա պարունակած լծիւնների, գործադրել բոլոր նոցա մէջ բովանդակուածը, և պաշտօնապէս զրաւօր կերպով հաղորդել ում հարկն է:

§ 78

Ելեալ թղթերը պատրաստում է Խորհրդարանի քարտուղարը համաձայն արձանագրութեան կամ անդամների ստորագրած զեկուլցման թերթին (§ 73): Նոքա պէտք է բացայայտ լինին և պարունակեն գործին վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները: Նոցա վերայ ևս նշանակվում է համար ըստ կարգին: Ելեալ թղթերն ստորագրում է նախագահը և վաւերագրում է քարտուղարը:

§ 79

Ելեալ թղթերը, դեռ տէրերին չյուզարկուած, մացվում են ելեալ թղթոց տոմարը, որակը նշանակվում են նոցա համարները, օրը, տարին և ամիսը և այն անձին անունը, որին յուզարկվում են: Բացի այս՝ այնտեղ գրվում են բովանդակութիւնն և համարը այն արձանագրութեան, որի հիման վերայ կազմուած է թուղթը: Ելեալ թղթերի պատճէնները (պատճենահան մամուլով) պահւում են Խորհրդարանների գործերում:

§ 80

Հասցէներով յուզարկուելու ելեալ թղթերը պէտք է դուռած լինին թղթեայ պահարանի մէջ և կնքուած Խորհրդարանների կնիքով. նոքա ակն են հասցվում առաքման գրքով:

§ 81

Ելեալ և մտեալ թղթերի տոմարները կարող են զետեղուիլ միևնոյն գրքին մէջ, որի ձախ կողմում նշանակվում են մտեալ և սը կողմում ելեալ թղթերը:

§ 82

Նոյնանման բովանդակութեամբ թղթերը, ինչպէս ուսանողների և ուրիշ անձերի խնդիրներն ամսական կամ միանուսոյ նպաստի մասին՝ կազմում են մի գործ և նշանակվում են մի համարով:

§ 83

Իւրաքանչիւր գործում պէտք է նշանակուած լինին նորա մէջ բովանդակուած թղթերի, թէ մտեալների և թէ, ելեալների, և նոցա յաւելուած-

ների ցանկը, նոյնպէս և այն անձերի և հաստատութեանց անունները, որոնցից ստացուել կամ որոց յուղարկուել են այն թղթերը: Այն զործի երեսին վերայ նշանակվում են զործի անունը, համարը, նոքա սկսուելու և վերջանալու ժամանակն և թերթերի թիւը:

§ 84

Խորհրդարանները բոլոր զործերը, զիւանազրութիւններն ու նիստերի արձանագրութիւնները պահվում են Խորհրդարանների գրասենեակներում, և նոցա ամբողջութեան պատասխանատու է քարտուղարը:

§ 85

Խորհրդարանների նիստերի բուն արձանագրութիւնները, զիւանազրութիւններն և գրամարկղի ու հաշուի տոմարները ոչ ոքի չեն կարող արուիլ սուն տանելու համար. նրանց կարելի է նայել Խորհրդարանի գրասենեակում: Եթէ անգամներից մէկը պէտք ունենայ, եկեղեցապատկան ստացուածքների շահերին համար, երկար միջոցով նայելու և քննելու մի զործ կամ զիւանազրութիւն՝ քարտուղարն առանձնական պատճէներ է հանում նոցանից (արձանագրութիւններից կամ ուրիշ նարկաւոր թղթերից) և ապիս է նոյն անգամին:

§ 86

Որոշելու համար մայրաքաղաքների ծխականների թիւը, և ավեն տարի, ընդհանուր ժողովներից յառաջ, նոցա, նոյնպէս և իրաւահասանների ճիշտ ցուցակը կալմելու համար (Քարձրազոյն հրամանով

Հաստատուած 1883 թ. հանձնների 4-րդ յօդ.) պատկանաւոր եկեղեցական Խորհրդարանը պարտաւոր է մայրաքաղաքների յիշեալ եկեղեցիներում պահել հասցէների պրբենական գիրք, որ պիտի լինի ժապարխուած, համարագրուած և Խորհրդարանի կրնքով վաւերացած: Հասցէի գրքերը պիտի ունենան հետեւեալ բաժանմունքները. 1) Տխականի ազգանունն, անունը և հայրանունը, 2) Ճննդեան տարին, 3) Ճննդատեղին, 4) կուլմն և պարտաւորութիւնքը, 5) մայրաքաղաք եկած տարին, 6) բնակութեան տեղը մայրաքաղաքում կամ նորանից գուրս (չբըջակացում). վերջին գեպքում նշանակել և այն տեղն ու բնակութեան տեղին, որոնք գանձում են մայրաքաղաքների հոյս եկեղեցեաց Տխականների շրջանակում:

§ 87

Արդէս զի Տխականները կարողանան լրայնել կամ փոփոխել իրանց հասցէները՝ եկեղեցու մուտքի պատին վերայ պետք է կախուած լինի յայտարարութիւն՝ թէ որտեղ է գանձում հասցէի գիրքը:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՄԱՍՆԱԹՈՂՈՎ

§ 88

Թեմակալ Առաջնորդը տարեկան հաշիւները, եկեղեցական ստացուածքները և այլ գումարները ստուգելու համար մայրաքաղաքների իւրաքանչիւր եկեղեցու Տխականներից վերաքննիչ մասնաժողովի

Համար նշանակում է մի-մի նախագահ և երկու-երկու անդամներ: Թեմակալ Առաջնորդը իւր նշանակած անձանց մասին Խորհրդարանին յայնում է հարելոյն դէպքում հաշուետարուան յաջորդող տարուայ յունուարի 1-ից ոչ ուշ:

Մանօմումին. Խորհրդարանի անդամի կոչումը չէ կարող միաւորուիլ վերաբննիչ մասնաժողովի նախագահի կամ անդամի կոչման հետ:

### § 89

Վերաբննիչ մասնաժողովները տարեկան հաշիւները ստուգում են զրբերի և վաւերաթղթերի միջոցաւ, իսկ հարկաւոր դէպքերում զինում են Խորհրդարանի ժողովների արձանագրութեանց և ստանում բացատրութիւն Խորհրդարանի այն անդամից, որը այդ բանի համար սրտանուած է լինում Խորհրդարանից:

### § 90

Վերաբննիչ մասնաժողովները մանրամասն կերպով կազմում են մատեան, որը հաշուի հետ մասին, ճողարարձուի միջոցաւ, ներկայացւում են Թեմակալ Առաջնորդին, իսկ Խորհրդին ստղես են այդ մատեանի պատճէներ:

---

Այս հրահանգը, որը համաձայն է Ա.-Պետերբուրգի և Մոսկուայի հայոց եկեղեցապատկան ստացուածքների կառավարութեան համար 1883 թ. նոյեմբերի 18-ին Բարձրագոյն հաստատուած կա-

նոնների 7-րդ յօդուածին, կազմել է մայրաքաղաքների չայոց եկեղեցիների չոգարարձու և մայրաքաղաքների եկեղեցական Խորհրդարանների նախագահ՝ Գեներալ-Մայեօր Իշխան Սիմէօն Գաւթեան Արամէլիք-Լազարեանցը՝ նախիջևանի և Բեսարաբիոյ Թեմակալ Առաջնորդ Բարձր Սրբազնութիւն Գրիգոր Արքեպիսկոպոսի համաձայնութեամբ, Ս.-Պեակերրուրդում, 1887 թ. օգոստոսի 21-ին և հաստատել է նախիջևանի և Բեսարաբիոյ Թեմակալ Առաջնորդ՝ Գրիգոր Արքեպիսկոպոսը 1887 թ. սեպտեմբերի 28-ին, և Թեմակալ Առաջնորդի նախօրօք համաձայնութեամբ 1888 թ. հոկտեմբերի 20-ին փոփոխել և լրացրել եմ. այժմ՝ ևս, նախիջևանի և Բեսարաբիոյ Թեմակալ Առաջնորդ Բարձր Սրբազնութիւն ներսէս Արքեպիսկոպոսի նախօրօք համաձայնութեամբ, նորից փոփոխել և լրացել եմ 1901 թ. մայիսի 29-ին: Մայրաքաղաքների չայոց եկեղեցիների չոգարարձու Իշխան Արամէլիք-Լազարեանց:

Այս հրահանգը, որ կազմել է նորին Պայծառափայլութիւն Ս.-Պեակերրուրդի և Մոսկուայի չայոց եկեղեցիների Տէր չոգարարձու Իշխան Սիմէօն Գաւթեան Արամէլիք Լազարեանցը՝ նախիջևանի և Բեսարաբիոյ չայոց Թեմակալ Առաջնորդ Գրիգոր Արքեպիսկոպոսի նախօրօք համաձայնութեամբ 1883 թ. նոյեմբերի 18-ին Բարձրագոյն հաստատուած Կանոնների 7-րդ յօդուածի համաձայն, և որը հաստատել է 1887 թ. սեպտեմբերի 28-ին Բարձր Սրբազնութիւնը, և յետոյ, 1888 թ. հոկտեմբերի 20-ին, նորին Պայծառափայլութիւն մայրաքաղաք-

ների հայոց եկեղեցիների Տէր հոգարարձու Իշխան Սիմէոն Սիմէոնեանը, Թեմակալ Առաջնորդի նախօրօք համաձայնութեամբ, փոփոխել և լրացրել է, ներկայումս ևս, իմ կանխօրէն համաձայնութեամբ, նորից փոփոխել և լրացրել է նորին Պայծառափայլութիւնը.— Այսու, պատշաճաւոր գործադրութեան համար, հաստատում եմ ստորագրութեամբ և անուանական կնքովս: 1901 թ. մայիսի 29: № 186.

Կնիք Նախիջևանի և Բեսարաբիայի Հայոց Լրտւորչական Թեմակալ Առաջնորդի: Արքեպիսկոպոս ՆԵՐՍԷՍ.



## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

### ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ  
ՍՏԱՅՈՒԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁ-  
ՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԿԱՆՈՆՆԵ-  
ՐԻՆ ՎԵՐԱՅ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԵԿԵ-  
ՂԵՑԵԱՅ Պ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՀԱ-  
ՂՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԱԾ.

Հաստատուած է 23-ին հաշիւ, 1887 թ., 1381.

Բարձրագոյն հրամանով 1841 թ. յունուարի  
31-ին հաստատուած կանոնների 7-րդ յօդուածի  
համաձայն՝ մայրաքաղաքների հայոց եկեղեցիների  
կալուածների կառավարութիւնը, նոյնպէս և նոցա  
համար քահանաների և պաշտօնեաների ընտրու-  
թիւնը յանձնուած է նոցա եկեղեցիների հոգարար-  
ձուին, որ նախապէս հաղորդակցում է այս մասին  
Թեմակալ Առաջնորդին հետ: Այս իրաւունքը չէ  
բարձրում վերջին օրէնքով, 1883 թ. նոյեմբերի  
18-ի որ փոփոխում է միայն եկեղեցական կալուած-  
ների կառավարութեան կարգը, իսկ եկեղեցական  
պաշտօնեաների ընտրութեան խնդիրը չէ շոշա-  
փում:

Ի նկատի առնելով, որ Պետական օրինաց հի-  
մանց Ա. հա. 1 մասի 72-րդ յօդուածի համաձայն

օրէնքը իւր զօրութիւնը պահում է մինչև որ նորագոյն օրէնքով բարձուի՝ 1841 թ. յունվարի 31-ի կանոնները քահանաների և եկեղեցական պաշտօնեաների ընտրութեան վերաբերութեամբ՝ բարձուած պիտի չհամարուին:

Հասցեագրութիւն 13-ին հայինի, 1887 թ., 2146.

Ի նկատի առնելով, 1) որ 1883 թ. նոյեմբերի 18-ի կանոնները վերաբերում են եկեղեցապատկան ստացուածքների կառավարութեան կարգին միայն, 2) որ այդ զործը վարելու համար ծխականների ընդհանուր ժողովները միայն ընտրում են այն անձերին, որոնք նշանակուած են նոյն կանոնների 4-րդ և 8-րդ յօդուածներում, և 3) որ Խորհրդարանների պարտաւորութեանց շրջանը եկեղեցապատկան ստացուածքների կառավարութեան մէջ և նոյա զործավարութեանց մանրամասն կարգաւորութիւնը որոշվում են՝ մայրաքաղաքների եկեղեցիների հոգարարձուի համաձայնութեամբ՝ Թեմակալ առաջնորդին հետ (յօդ. 7)՝— հոգարարձուի պարտաւորութիւնն է մէջ աեղից հետայնել այն խնդիրները, որոնք, օրէնքի համաձայն, չեն ենթարկվում Խորհրդարանների և ընդհանուր ժողովների խորհրդածութեանց:

Հասցեագրութիւն 23-ին հայինի, 1888 թ., 2681.

Ներքին զործոց նախարարութիւնը քննելով այն խնդիրները, որոնք առաջարկել էր մայրաքաղաքների հայոց եկեղեցիների հոգարարձուն 1888 թ. մայիսի 13-ին թ. 10՝ եկաւ հետևեալ եզրակացութեանց.

Ս.— Պետերբուրգի հայոց եկեղեցիների ծխականների ընդհանուր ժողովը, որ կայացաւ 1883 թ. մայիսի 8-ին՝ Բարձրագոյն հրամանով 1883 թ. նոյեմբեր 18-ին հաստատուած մայրաքաղաքների հայոց եկեղեցապատկան ստացուածքների կառավարութեան Կանոնների 4-րդ և 8-րդ յօդուածների բուն իմաստին համաձայն՝ պէտք է սահմանափակուէր միայն ընտրելով այն պաշտօնականները, որոնք նշանակուած են յիշեալ յօդուածներում: սակայն այլ ժողովը իւր իրաւունքների սահմանից դուրս եկաւ, թողլ տալով իրան խորհրդածութեան առնել այնպիսի խնդիրներ, որոնք քննութեան չեն ենթարկվում: Սորա հետևանքն այն եղաւ, որ ժողովը Խորհրդարանի անդամի երկրորդ փոխանդամի ընտրութիւնը չարաւ, որ ժողովի խեղճական պարտաորութիւնն էր կատարել:

Այս պատճառով նախարարութիւնը յիշեալ ժողովի բոլոր որոշումները և նորանուժ կայացած ընտրութիւնները նկատելով ապօրինի և անվաւեր՝ անճրաժեշտ է համարում երկրորդ անգամ ծխականների ընդհանուր ժողովը դումարել, յանձնարարելով նորա նախագահին, որ հարկ եղած միջոցները ձեռք առնէ՝ նոր ժողովում օրինական կարգը որևիցէ խտրանումից պահպանելու համար:

Տարածուած է 13-ին նոյեմբերի, 1888 թ., 5876.

Ի նկատի առնելով, 1) որ Սթ. հաւաք. 1886-ի նարուն՝ ԺԱ. հատ. 1 մասի 1044 յօդուածի համաձայն՝ պետական ասեանների և անձերի հետ յա-

րաբերութեան իրաւունքը արուած է ճողաբար-  
ձուին, իբրև Եկեղեցական Խորհրդարանների Նա-  
խագահին, 2) որ Սր. Նու. նոյն ճարտու. 1037-րդ  
յօդուածի համաձայն՝ ճողաբարձուի բացակայու-  
թեան կամ հիւանդութեան դէպքում՝ նորա տեղը  
իւրաքանչիւր Խորհրդարանի մէջ բանում է պատկա-  
նաւոր Խորհրդարանի անդամներից մէկը Նախագահի  
ընտրութեամբ, և 3) որ այս կերպով լիազօրութիւն  
ստացած անձերը կարող են գործել նոցա արուած  
լիազօրութեան սահմանում և եթ՝—պետական ա-  
տենանների և անձերի հետ յարաբերութեան իրա-  
ւունքը պատկանում է միայն ճողաբարձուին, բայցի  
այն դէպքերից, երբ նա հարկաւոր համարի իւր  
նշանակած նախագահոցին լիազօրութիւն տալ յա-  
րաբերութեան մասնելու ստիկանութեան հետ ար-  
տաքոյ կարգի պէտքերի համար, երբ յապաղումից  
կարող են զգալի անյարմարութիւններ ծագել:

Նախընթացումը 20-ին հետքումը, 1889 թ., 646.

Ի նկատի առնելով, 1) որ Բարձրագոյն հրամա-  
նով 1868 թ. ապրիլի 14-ին հաստատուած Կով-  
կասեան Մասնախումբի Գրութեան 1 կէտի հիման  
վերայ Լազարեանց ձեմարանը ճանրային Կրթու-  
թեան նախարարութեան հսկողութեան յանձնելիս՝  
անձեռնամուխ թողած ձեմարանում չքաւոր հայ  
երեխաների համար նշանակուած թոշակաւորների  
թիւը, 2) որ Բարձրագոյն հրամանով 1872 թ.  
դեկտ. 16-ին հաստատուած վերոյիշեալ ձեմարանի  
Կանոնադրութեան § 16 համաձայն սորա Պատուա-

ւոր Նոգարարձուին իրաւունք ունի չքաւոր հայերի  
երեխաներից ընդունել ձեւմարանում կրթութիւն  
տալու համար, 3) որ յիշեալ կանոնադրութիւնները  
այնուհետեւ չեն փոփոխուած մայրաքաղաքների  
հայոց եկեղեցապատկան ստացուածքների համըն-  
կերական վերահսկողութեան 1883 թ. նոյեմբերի  
18-ի Կանոններով և 4) որ վերոյիշեալ թոշակա-  
ւորների ծախսերը եկեղեցապատկան գումարից  
անօրինվում են Բարձրագոյն հրամանով հաստատ-  
ուած Հանրային կրթութեան նախարարութեան  
նախահաշուի համաձայն՝ ներքին Գործոց նախա-  
րարութիւնը Հանրային կրթութեան նախարարի  
գրութեան վերայ որոշեց, որ մայրաքաղաքների  
հայոց եկեղեցական մուտքերից թողուած փողը  
Լազարեանց ձեւմարանում եկեղեցական թոշակա-  
ւորներ պահելու համար անպայման պարտաւորիչ  
է, և այս թոշակաւորներին նշանակելու իրաւունքը  
պատկանում է այս հիմնարկութեան Պատուաւոր  
Նոգարարձուին:



П Р А В И Л А  
И  
И Н С Т Р У К Ц И Я

ПО УПРАВЛЕНІЮ ИМУЩЕСТВАМИ

С.-ПЕТЕРБУРГСКИХЪ И МОСКОВСКИХЪ

АРМЯНСКИХЪ ЦЕРКВЕЙ.



С.-ПЕТЕРБУРГЪ  
„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.  
1901



## П Р А В И Л А

### объ управленіи имуществами армяно-григоріанскихъ церквей въ С.-Петербургѣ и Москвѣ.

По положенію Комитета Министровъ Высочайше  
утверждены 18-го ноября 1883 г.

1) Управленіе имуществами и относящимися къ нимъ дѣлами армяно - григоріанскихъ церквей въ С.-Петербургѣ и Москвѣ ввѣряется, въ каждомъ изъ сихъ городовъ, особому совѣту въ составѣ предсѣдателя и членовъ, числомъ шесть, съ равными правами, избираемыхъ прихожанами изъ своей среды на три года.

2) Предсѣдателемъ обоихъ совѣтовъ состоитъ попечитель столичныхъ армянскихъ церквей князь Семень Абамеликъ-Лазаревъ.

